ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ «ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ»
ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՍՈՆՆԱ ԱՂԵԿՅԱՆԻՆ

Հարգելի՛ տիկին Աղեկյան,

Երևանի Օղակաձև այգու՝ Նալբանդյան փողոցի և Սայաթ-Նովա պողոտայի միջև ընկած հատվածում կառուցապատման աշխատանքներ իրականացնելու վերաբերյալ բարձրացված հարցերի կապակցությամբ, տեղեկացվում է.

Օղակաձև այգու 4-րդ հատվածի՝ Սայաթ-Նովա փողոցից մինչև Նալբանդյան փողոց ընկած տարածքում բնապահպանական, պատմամշակութային ժառանգության և բնապատկերային արժեքների պահպանման հիմնահարցերի փոխկապակցված լուծումներով նախատեսվում է վերակենդանացնել այգին, զարգացնել որպես միջազգային ստանդարտներին համապատասխան հանգստի և ժամանցի կազմակերպմամբ տարբեր տարիքի այցելուների կենսունակության բարձրացմանը նպաստող և սպասարկող մի վայր, ինչու չէ զբոսաշրջային հանգույց՝ խթանելով զբոսաշրջության զարգացմանն և առկա խնդիրներին տալ միասնական լուծում:

Հատակագծային օպտիմալ լուծումներով կստեղծվեն բարեկարգ ծառուղիներ ու ծաղկազարդ արահետներ, հետիոտնային շարժման համար ճեմուղիների և հետիոտն արահետների ցանց՝ նպատակակետերի հասանելիության ամենակարճ հեռավորությամբ ու դրանց երկայնքով կարճատև հանգստի հարթակներով, ջրային մակերեսներ՝ շատրվաններ, հարթ կառույցներ, սպորտային գոտիներ, ինչպես նաև հաճախորդների սպասարկման և զբոսայգու շահագործման համար նախատեսված այլ կառույցներ, հեծանվային ուղիներ, աստիճաններ, թեքահարթակներ ու բարեկարգման այլ տարրեր:

Այգու նշված հատվածում վերակառուցման ծրագիր իրականացնելու էսքիզային առաջարկ Երևանի քաղաքապետարանին ներկայացրել է «Գրիին ռոք մենեջմենթ գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, սակայն ներկա փուլում այգու վերակառուցման հաստատված որևէ նախագիծ առկա չէ, ինչպես նաև կառուցապատող ընկերություն ընտրված չէ:

Ինչ վերաբերում է հասարակական լայն քննարկում ստացած թենիսի կորտերին, ապա Երևանի քաղաքապետարանը ներկայումս իրականացնում է մի շարք միջոցառումներ, որոնք ուղղված են սպորտի զարգացմանը և առողջ ապրելակերպի խթանմանը, ներկայումս նախագծման փուլում է Մալաթիա-Սեբաստիա համալիր մարզադպրոցին կից հատվածում թենիսի և խաղային մարզաձևերի մարզադաշտի կառուցումը, այդ թվում նաև քննարկվում է այլ վայրում ևս միջազգային չափորոշիչներին համապատասխան թենիսի նոր կորտերի կառուցման հարցը:

Շախմատի տան շենքը ենթակա է պահպանման, ինչպես բոլոր պատմամշակութային հուշարձան հանդիսացող շինությունները: Ավելին՝

բարեկարգվելու և տեսքի է բերվելու դրանց հարակից տարածքները, ինչպես վերը նշվեց:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ